

ԼՃաշենում բացվել է հիմնանորոգված մարզադպրոցը

30.08.2017

Օգոստոսի 30-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն աշխատանքային այցով եղել է ԼՃաշեն համայնքում: Այցի ընթացքում մարզպետը մասնակցել է ԼՃաշենի մարզադպրոցի բացման արարողությանը, որը կառուցվել է ԼՃաշենի համայնքային բյուջեի, լճաշենցիների և ֆրանսիական „Այո,, երիտասարդական հասարակական կազմակերպության տրամադրած միջոցների հաշվին: ԼՃաշենի համայնքի ղեկավար Կորյուն Մարգարյանը նշել է, որ մարզադպրոցում գործելու է 14 խմբակ, նախատեսվում է ունենալ նաև ֆիթնես կենտրոն: Ըստ նախնական հաշվարկների մարզադպրոցը ունենալու է 150- 200 սան: Մարզպետ Կարեն Բոթոյանն իր խոսքում նշել է, որ տպավորված է համայնքում կատարած աշխատանքների ծավալով և հավելել, որ համայնքի մանկապարտեզի վերանորոգման և ընթացքի մեջ գտնվող մի շարք ծրագրեր կյանքի կոչելուց հետո ԼՃաշենն ավելի լուրջ հայտ կներկայացնի, և կդասվի մարզի ամենաարագ զարգացող համայնքների թվին: Կարեն Բոթոյանը նշել է նաև, որ ԼՃաշենը պետք է օրինակ ծառայի այլ համայնքների համար, քանզի այստեղ շատ արդյունավետ են օգտագործում տեղական ռեսուրսները՝ գրանցելով լուրջ արդյունքներ: Այցի ընթացքում Կարեն Բոթոյանը համայնքի ղեկավարի հետ քննարկել է ԼՃաշենի զարգացմանն ուղղված այլ հարցեր ևս: